Ո՞Վ ԷՐ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻՆ ՉԱՐՉԱՐՈՂԸ

(Տրդատ Արշակունին, Թե՞ Ներսեհ Սասանյանը)

ՍԱՐԳԻՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Արտաշատում զնդան նետված Գրիգոր Լուսավորչի կրած բոլոր տառապանքները Ագաթանգեղոսի երկի առաջաբանում համարվում են «երկպատական բռնութեան» հետևանք[1]: *«Նոր հայկազյան բառարանը» երկպատական բառին վերագրում է այսպիսի իմաստներ.« Կա՛մ է որպէս երկպատիկ, եւ. կամ յերկուց կողմանց պատօղ, պատեալ»*[2]: *«Երկպատական բռնութեանն» ևս մեկ անգամ հանդիպում ենք Կորյունի «Վարք Մաշտոցի» երկում: Այս դեպքում դրան տրվել է «կրկնակի, երկու կերպ բռնություն՝ «ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ» բացատրությունը*[3]: *Մեր կարծիքով* երկպատական բռնությունը *նշանակում է «զրադաշտական բռնություն», իսկ* երկպատական-ը *եղել է զրադաշտականության՝ որպես երկարմատյա (դուալիստական) կրոնի, հեգնական անվանումը* (երկ-պատ-ական *բառի մեջ առկա* պատ-ը *արմատն է նաև* պատառ *բառի, որից՝* պատառել *«ճեղքել»)*[4] : *Մեսրոպ Մաշտոցի աշակերտ Հովհանին վերաբերող իր հիշյալ վկայության մեջ Կորյունը գրում է. «Որում դեպ լինէր յետ վախճանի սրբոյն, բաղում եւ ազգի փորձութեանց եւ կապանաւոր վշտաց, մենամարտիկ* երկպատական բռնութեանն, *ի Տիգբոն քաղաքի վասն Քրիստոսի յաղթութեամբ տարեալ համբերեաց. վասն որոյ եւ զխոստովանողական անուն ժառանգեաց, ի նոյն վերակացութիւնն դառնայր յերկիրն Հայոց»*[5]:*Բայց նրանից շատ առաջ, ըստ Ագաթանգեղոսի, Գրիգոր Լուսավորիչն էր, որ «երկպատական բռնութեան» դեմ «մենակռիւ մենամարտիկ» էր եղել և «վասն Քրիստոսի յաղթութեամբ տարեալ, որոյ զվկայ անուն ժառանգեալ, որ ի մահ հասեալ մտեալ, եւ կամօքն Աստուծոյ այսրէն դարձեալ՝ ի վերակացութիւն դառնայր յերկիրս Հայոց»*[6]:

Եթե հավատ ընծայենք Ագաթանգեղոսի երկի հիմնական մասից եկող ավանդույթին, ապա «երկպատական բռնութեան» աղբյուր համարելու ենք Տրդատ III թագավորին: Բայց Տրդատը ոչ միայն զրադաշտական չէր, այլև այդ կրոնի ջատագով Սասանյան արքայատոհմի երդվյալ թշնամին

---

1 Ագաթանգեղայ պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանի. Երևան, 1983 (այսուհետև՝ Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, 13):

2 Նոր բառգիրք հայկազեան լեզուի(այսուհետև՝ ՆԲՀ). հ. Ա, Երևան, 1979, էջ 699:

3 Կ ո ր ի ւ ն. Վարք Մաշտոցի, բնագիրը ձեռագրական ընթերցվածներով, թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով ի ձեռն պրոֆ. դ-ր Մանուկ Աբեղյանի. Երևան, 1941, էջ 97, ծան. 3:

4 Պատ արմատն է պարունակում նաև պատիճ բառը (պատիճ <պատ- ի՛ճ հմմտ. լուի՛ճ, կաւ- ի՛ճ, պատաղ-ի՛ճ): Այս բառը գործածվում է նշելու համար «մի քանի բույսերի պատյանը, որի մեջ ամփոփվում են պտուղները» մասնավորապես լոբու, բակլայի և ակացիայի սերմերը պարունակող երկփեղկ պատյանները (Ս տ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց. Հայերեն բացատրական բառարան. հ. 4, Երևան,1945, էջ 63):

5 Կ ո ր ի ւ ն. նշվ. աշխ., էջ:

6 Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, 13:

էլ: Ըստ այսմ, բացառված է նրա «երպատական բռնութեան» աղբյուր լինելու հանգամանքը: Պատահական չէ, որ Ագաթանգեղոսի երկի առաջաբանից բերված հիշյալ հատվածը ոչ մի խոսք չի ասում Տրդատ Թագավորի և Գրիգոր Լուսավորչի առճակատման մասին, իսկ նույն այդ հատվածի պարբերությունն ավարտվում է Տրդատ III-ի փառաբանությամբ. «Իսկ բարեցապարան Տրդատ յանկարծակում կենացն ասպնջական ցանկալի ամենեցուն լինէր, որ աշխարհածնունդ հայրենեացն որդի գտանէր շնորհօք Աստուծոյ, եւ յաւիտենական կենացն մերձաւոր լինէր»[7]: Ուրեմն, «երկպատական բռնութեան» աղբյուրը որոնելու ենք Տրդատ III-ին հայոց գահի վրա նախորդած այն անձանց մեջ, որոնք Սասանյան արքայատոհմի ներկայացուցիչներն էին՝ պարսիկ զրադաշտականներ:

261 թ. գահընկեց արված հայոց թագավոր Արտավազդ V-ից (մեկ այլ կարծիքի համաձայն, Հայաստանի կառավարիչ Արտավազդ Մանդակունուց)[8] հետո հայոց գահին բազմել են Սասանյան երեք արքայազուններ՝ Որմիզդ-Արտաշիրը, Որմզդակը և Ներսեհը[9]: Սրանցից առաջինն ու երրորդը հետագայում դարձել են Սասանյան Իրանի արքայից արքաներ: Հայտնի է, որ 226թ. տեղի ունեցած դահակալական փոփոխությամբ Իրանում վերացավ կրոնական հանդուրժողականությունը և երկրի պետական կրոն հռչակվեց զրադաշտականությունը: Այն պարտադրվում էր ոչ միայն բուն Իրանի քաղաքացիներին, այլև Սասանյանների նվաճած կամ ենթակա երկրների բնակչությանը: Մասնավորապես Հայաստանում Սասանյան դահակալների՝ «Հայոց մեծ թագավորների», նպատակը հայերին ու Հայաստանը զրադաշտական դարձնելն էր: Այդ ճանապարհին կանգնած յուրաքանչյուր գաղափարական խոչընդոտ և նրա ջատագովներին Սասանյանները պատրաստ էին վերացնելու՝ լիներ դա հայկական հեթանոսությունն ու հեթանոս հայերը, թե քրիստոնեությունն ու քրիստոնյա հայերը: Սասանյան պետության հոգևոր առաջնորդ մոգպետ Կարտիրը իր արձանագրություններում պարծենում է, որ ատրուշաններ է հիմնել և մոգերի համայնքներ ստեղծել Սասանյան արքաներին պատկանող Երան //Իրան և Աներան// «Ոչ Իրան» երկրներում: Վերջիններիս մեջ էին թե՛ Հայաստանը, թե՛ նրա հարևան երկրները՝ Բաղասականը, Աղվանքը, Վիրքը, Ասորիքը,Կիլիկիան, Կապադովկիան: Նա պատմում է, թե ինչ դաժան հալածանքների է ենթարկել հրեաներին, բուդդայականներին, հինդուիստներին, նազարեացիներին և մյուս քրիստոնյաներին՝ կործանելով նրանց կենտրոնները, իսկ նրանց դատապարտելով աքսորի ու մահվան[10]:

Մեր պատմահայրը հաղորդում է, որ «զանդրիսն զոր արար Վաղարշակ պատկեր իւրոց նախնեացն հանդերձ Արեգակամբ եւ Լուսնիւ յԱրմաւիր, եւ փոխեցան յԱրմաւրայ ի Բագարան եւ դարձեալ յԱրտաշատ՝ զայնոսիկ փչրէ Արտաշիր»[11]: Խոսքն անկասկած հեթանոս հայերի պաշտած Արեգակ// Տիր//Ապոլոն և Լուսին// Անահիտ//Արտեմիս աստվածությունների կուռքե-

7 Նույն տեղում:

8 Ղ. Ա լ ի շ ա ն. Այրարատ. Բնաշխարհ Հայաստանեայց. Վենետիկ, 1980, էջ 374:

9 Հայ ժողովրդի պատմություն (այսուհետև՝ ՀԺՊ). հ. 2, Երևան, 1984, էջ 49:

10 Р. Ф р а й. Наследие Ирана. М., 1972, с. 165, 302; В. Г. Л у к о н и н. Культура Сасанидского Ирана. М., 1969, с. 87.

11 Մովսիսի Խորենացւոյ պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի. Երևան, 1981 (այսուհետև՝ Խ ո ր ե ն ա ց ի):

րի մասին է[12], որոնց ոչնչացումը տեղի է ունեցել Որմիզդ-Արտաշիրի օրոք[13]: Բնականաբար, զրադաշտական այս արքան ոչնչացնելու էր ոչ միայն այս աստվածությունների կուռքերը, այլև կործանելու էր այն տաճարները, որտեղ դրված են եղել այդ կուռքերը: Ագաթանդեղոսը զարմանալիորեն այդ ամենը վերագրում է Տրդատ III-ին և Գրիգոր Լուսավորչին: Նա գրում է. «Ապա ինքն իսկ թագավորն խաղայր գնայր ամենայն զօրօքն հանդերձ ի Վաղարշապատ քաղաքէ՝ երթալ յԱրտաշատ քաղաք, աւերել անդ զբագինսն Անահտական դիցն, եւ որ յԵրազամոյն տեղիսն անուանեալ կայր: Նախ դիպեալ ի ճանապարհին երազացոյց երազահան պաշտաման Տրի դից, դպրի գիտութեան քրմաց, անուանեալ դիւան գրչի Որմզդի, ուսման ճարտարութեան մեհեան. նա ի նա ձեռն արկեալ՝ քակեալ այրեալ աւերեալ քանդեցին: Ուր եւ երեւեալ կերպարանեալ դիւացն ի նմանութիւն առն եւ ձիոյ բազմութեան... փախստեայք յԱնահտական մեհեանն անկանէին... Իսկ սուրբն Գրիգոր իբրեւ տեսեալ զայն՝ զնշան տէրունական խաչին առնոյր եւ դիմէր ի դուռն մեհենին. եւ ամենայն չինուածք մեհենին ի հիմանց դղրդեալ տապալեցան. եւ լուցեալ յանկարծօրէն փայտակերտն հրդեհեցաւ ի տէրունական նշանին զօրութենէ, եւ ծուխն ծառացեալ մինչեւ յամպս հասանէր»[14]: Ինչպես տեսնում ենք, հակառակ Խորենացու, Ագաթանդեղոսը Անահիտի Արտաշատի մեհյանի և Տիրի Երազամույնի մեհյանի կործանողներն է համարում ոչ թե Սասանյան Արտաշիրին (Որմիզդ-Արտաշիրին), այլ Տրդատ III-ին և Գրիգոր Լուսավորչին:

Ագաթանգեղոսի այս և նման վկայություններին, ինչպես Գ. Սարգսյանն է նկատում, «պիտի մոտենալ որոշակի վերապահությամբ, որին մղում է Դարանաղյաց Անիի սրբատեղիի և Գառնիի հեթանոսական տաճարի պահպանման փաստը»[15]: Է.Դանիելյանն ավելացնում է, որ հեթանոսական սրբավայրերը Հայաստանում ավերվել էին նախքան քրիստոնեությունը պետական կրոն հռչակելը, իսկ դրանք ավերողները եղել են զրադաշտական մոգերը (ոչ թե Գրիգոր Լուսավորիչը և նրա հետևորդները)[16]: Ասորի պատմիչ Մշիխա Զեխայի «Ադիաբենի եկեղեցու պատմությունը» երկում առկա վկայությունները լույս են սփռում այն միջոցների և նպատակի վրա, որ կրոնական քաղաքականության բնագավառում որդեգրել էին առաջին Սասանյանները՝ առաջին արքա Արտաշիրից (226–243 թթ.) սկսած: Այնտեղ կարդում ենք.«Սասանյանների հիմնագիր Արտաշիր արքան հրամայեց, որ նոր ատրուշաններ կառուցվեն ի պատիվ աստվածների, և արևը՝ ամբողջ տիեզերքի մեծ աստվածը, հատուկ երկրպագության արժանի լինի: Ինքն առաջինը ընդունեց «արքայից արքա» և «աստված» տիտղոսը: Այսպես նա եղած անարդարություններին ավելացրեց նաև անեծքը, (որովհետև) ուզում էր, որ իրեն աստվածների իրավունք տրվի: (Ստիպում էր), որ բազում օտար հավատալիքներ ձուլվեն արևի ու կրակի

12 Գ. Սարգսյան. Հելլենիստական գրաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին. Երևան, 1966, էջ 37, 39, 43:

13 Նույն տեղում, էջ 68–69:

14 Ագաթանգեղոս, ՃԸ, 778–779:

15 Գ. Սարգսյան. նշվ. աշխ., էջ 130 (նաև էջ 241 և ծան. 171):

16 Է. Դանիելյան. Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու հոգևոր ակունքները. Երևան,1996,էջ 15:

(պաշտամունքի) հետ»[17]: Հայաստանում սասանյան զրադաշտականության տարածման ճանապարհին կանգնած էր ոչ միայն հայկական հեթանոսությունը, այլև քրիստոնեությունը, որը և որի հետևորդները նույնպես ենթակա էին հալածանքների: Դրանք հատկապես սաստկանալու էին Հայաստանի Սասանյան գահակալներից վերջինի՝ Ներսեհի (274-293թթ.) օրոք, որի գահակալության տարիներին Իրանում բանտարկված Մանին՝ մանիքեական կրոնի հիմնադիրը, մահվան էր դատապարտվել և լայն չափեր էին ընդունել հալածանքները և հետապնդումները ոչ զրադաշտականների նկատմամբ[18]: Իրադարձությունների այսպիսի ընթացքը Սասանյան արքայից արքաներին ենթակա «Երան եւ Աներ՝ան» երկրներում, մեր կարծիքով, հուշում է, թե ով կարող էր լինել «երկպատական»// զրադաշտական կրոնի ջատագով հայոց այն թագավորը, որի հրամանով Արտաշատի զնդանն էր նետվել Գրիգոր Լուսավորիչը: Բնականաբար, այդպիսի հրաման արձակող թագավորը չէր կարող լինել Տրդատ III-ը, որը դեռևս թագավոր չէր (անդամ Հայաստանում չէր), բայց դա կարող էր լինել զրադաշտական Ներսեհը՝ «Հայոց մեծ թագավորը»:

Այդ ժամանակաշրջանում Հայաստանում տեղի ունեցած քրիստոնյաների հալածանքների մասին դրել էր Կեսարիայի Փերմելիանոս եպիսկոպոսը: Նրա երկից մասնակիորեն օգտվելով է Մովսես Խորենացին գրել իր «Հայոց պատմության» Բ գրքի հե-հէ գլուխները: Այդուհանդերձ, մեր պատմահայրը նկատում է, որ հիշյալ եպիսկոպոսը «գրէ զբազումս վկայեալս եւ ի Խոսրովայ, ի մերում աշխարհիս, համայն եւ յետ նորա օտարք յօտարաց: Բայց զի ոչ ճշմարտութեամբ եւ ոճով պատմէ, եւ ոչ զանուանս նշանակէ կամ զտեղիս կատարմանցն՝ ոչ ինչ կարեւորագոյն համարեցաք երկրորդել»[19]: Պարզվում է, որ Փերմելիանոսը խոսել է բազում քրիստոնյաների նահատակության մասին՝ իրականացված ինչպես Տրդատ III-ի հայր Խոսրով Մեծի, այնպես էլ նրանից հետո թագավորած «յօտարաց»: Բնականաբար, այս «օտարները» լինելու էին Հայաստանի Սասանյան դահակալները: Դա հաստատվում է Խորենացու հաջորդ շարադրանքի միջոցով: Այնտեղ կարդում ենք.«Իսկ որ ինչ զկնի մահուանն Խոսրովայ մինչեւ ցթագաւորութիւնն Տրդատայ ի ժամանակս անիշխանութեանն պատմէ՝ ստոյդ համարելով երկրորդեմք քեզ համառօտ բանիւք»[20]: Իր խոստման համաձայն, հաջորդ Հզ և Հէ գլուխներում պատմահայրը համառոտ կերպով ներկայացնում է Սասանյան Արտաշիրի կողմից Հայաստանի նվաճման, նրա ձեռնարկած վերափոխումների իրականացման և երկրում զրադաշտականության ներդրման հանդամանքները:

Առաջին հայացքից տարօրինակ է թվում, որ Հայաստանը նվաճած Սասանյան Արտաշիրը, որը հավանաբար «Հայոց մեծ թագավոր» հռչակված Որմիզդ-Արտաշիրն է, կործանել էր ոչ միայն Արշակունիների նախնյաց

---

17 Հ. Մ ե լ ք ո ն յ ա ն. Ադիաբենի պետությունը և Հայաստանը. Երևան, 1980, էջ 180:

18 В. Г. Л у к о н и н. Նշվ. աշխ., էջ 98:

19 Խ ո ր ե ն ա ց ի, Բ, հե: Եթե Խոսրովի առնչությամբ քրիստոնյաների դաժան հալածանքների մասին Խորենացին հիշատակում է, իսկ Տրդատի առնչությամբ չի էլ ակնարկում, ուրեմն, նա համոզված է եղել, որ Խոսրով II-ի օրոք նման բաներ եղել են, իսկ նրա որդի Տրդատ III-ի օրոք ոչ:

20 Նույն տեղում:

արձանները, այլև Արեգակի և Լուսնի կուռքերը: Չէ՞ որ Լուսին-Անահիտը Սասանյանների դինաստիական աստվածուհին էր: Նշենք, որ Արտաշիր Ի-ի հայր Պապակը և պապ Սասանը Ստահրի Անահիտի տաճարի քրմերն էին, իսկ Արտաշիր Ի-ը և Շապուհ Ի-ը (243-273թթ.) կրում էին նաև Ստահրի Անահիտի տաճարի «տեր» (p'ths'y) տիտղոսը[21]: Նրանցից Շապուհ Ի-ը իր արծաթե դրամներին պատկերված է կիսալուսնի և աստղի պատկեր կրող գլխանոց-թագով[22]: Ընդ որում, եթե «Հայոց մեծ թագավոր» Որմիզդ-Արտաշիրը՝ ապագա արքայից արքա Որմիզդ Ի-ը, նույնացված էր Որմիզդ // Ահուրամազդայի հետ, ապա նրա ավագ կինը՝ թագուհին, նույնացված էր Անահիտ դիցուհու հետ[23]: Եթե Հայաստանի Սասանյան գահակալը ոչնչացնում էր Անահիտի կուռքը, ուրեմն,վերացնում էր նաև նրա պաշտամունքը, նշանակում է հայոց Մայր դիցուհին իր Անահիտ անվամբ Սասանյանների դինաստիական աստծուն առնչվելով հանդերձ, նրանից խիստ տարբերվում էր իր էությամբ: Անահիտին հայը համարում էր «փառք ազգիս մերոյ եւ կեցուցիչ», «մեծն Անահիտ, որով կեայ եւ զկենդանութիւն կրէ երկիրս հայոց», «բարերար ամենայն մարդկան բնութեան», «մեծն Անահիտ տիկին», «մայր ամենայն զգաստութեանց»[24]: Իսկ Անահիտը առաջին Սասանյանների համար դինաստիայի հովանավոր ռազմիկ դիցուհի էր, որը հաղթանակներ էր շնորհում այդ դինաստիայի ներկայացուցիչ թագավորներին[25]:

Առաջին հայացքից տարօրինակ է թվում նաև Արեգակի կուռքի ոչնչացման փաստը, երբ հայտնի է, որ Սասանյան թագավորներն Արեգակը համարում էին ամենամեծ աստվածը և նրա պաշտամունքը նույնիսկ բռնությամբ պարտադրում էին իրենց հպատակված երկրների բնակչությանը: Բանն այն է, որ հայոց Արեգակ // Տիրը իր էությամբ տարբեր լինելով Սասանյանների Արեգակ // Ահիրից, միևնույն ժամանակ հայ Արշակունիների գինասիական աստվածն էր: Բնականաբար, Արշակունի արքայատոհմի աստվածացված նախնիների արձանների հետ միասին Հայաստանի առաջին Սասանյան դահակալը պետք է ոչնչացներ նաև հայոց Արեգակ // Տիրի կուռքը և կործաներ նրա տաճարը: Տիրը Արշակունիների հայկական ճյուղի դինաստիական աստվածը լինելու տեսանկյունից ուշագրավ է ինչպես այն, որ Գառնիի հեթանոսական տաճարի հիմնադիր Տրդատ Ի-ը (52-80թթ.) կրում էր «Տիրատուր» // իրան. Տիրիդատ (>Տրդատ) նշանակող անուն, այնպես էլ այն հանդամանքը, որ իր հունարեն արձանագրության մեջ նա իրեն Հելիոս «արև», «Արևաստված» է կոչում: Ըստ Գ. Սարգսյանի, «դա Հելիոս (Արև) -Ապոլոն-Տիր աստվածն է, և Տրդատը, աստվածացվելով, նույնացվել է այդ աստծու հետ, ինչպես Տիգրան Բ-ն՝ Վահագնի»[26]: Ըստ այսմ, Տրդատ Ի-ը Գառնիի հեթանոսական տաճարը կարող էր ձոնած լինել հենց Տիրին (ոչ թե Միհրին կամ Վահագնին): Բնականաբար, իր հովանավոր աստծու անունը կրող Տրդատ III-ը չէր կարող

21 В. Г. Л у к о н и н. Նշվ. աշխ., էջ 30-31, 73:
22 Նույն տեղում, էջ 29:
23 Նույն տեղում, էջ 83, 97,
24 Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, ե, 53, ե, 59, Զ, 68:
25 В. Г. Л у к о н и н. Նշվ. աշխ., էջ 97:
26 Գ. Ս ա ր գ ս յ ա ն. Նշվ. աշխ., էջ 59 (նաև էջ 62):

լինել Երազամուլն վայրում գտնված այդ աստծու տաճարը կործանողը, որովհետև քրիստոնյա գառնալուց հետո անգամ նա անձեռնմխելի էր թողել այդ նույն աստծուն ձոնված տաճարը Գառնիում:

Հայ Արշակունի արքայատոհմում Տիրի պաշտամունքը ինչ-որ այլափոխումից հետո շարունակել է գոյատևել նաև հետագայում: Հայ Արշակունի քրիստոնյա արքաների և արքայազունների Տրդատ, Տիրան (<Տիր-ան) և Տիրիթ (Տիր-իթ) անունները դրա լավագույն վկայություններն են: Այս տեսանկյունից ուշագրավ է նաև հետևյալ հանգամանքը: Տրդատ III-ը մկրտվելիս ստացել էր Յովհաննէս անունը՝ ի հիշատակ Հովհաննես Մկրտչի՝ Կարապետի[27]: Իսկ հայտնի է, որ ժողովրդական քրիստոնեության մեջ (հայկական ժողովրդական հավատալիքներում) Սուրբ Կարապետին էին վերագրվում Տիր աստծուն բնորոշ և հոգևոր ոլորտին վերաբերող այնպիսի գծեր, ինչպիսիք էին արվեստները հովանավորելը, երաժշտական ունակությամբ օժտելը և բանաստեղծական ձիրք շնորհելը[28]: Ի դեպ, դրա մասին հաճախ արվեստի ապագա գործիչը, երաժիշտը կամ բանաստեղծը իմանում էր երազում իրեն հայտնված սրբից: Բացառված չէ, որ Տիր աստծու պաշտամունքային ոլորտին վերաբերող լույս-արեգակնային գծերն էլ Տրդատ III-ը ներմուծած լիներ իր նոր աստծու՝ Քրիստոսի պաշտամունքի մեջ և, դրանով իսկ, իր անձնական-դինաստիական շահերին տված լիներ գաղափարախոսական նոր հիմնավորում (հմմտ. Տիր/տրնդեզ և Քրիստոս/տեառնընդառաջ): Չէ՞ որ Քրիստոսն ասում էր. «Ես եմ լույսը», իսկ Գրիգոր Լուսավորիչը ասում էր. «Եղեւ այր մի առաքեալ յԱստուծոյ, անուն նորա Յովհաննէս (Մկրտիչ). սա եկն ի վկայութիւն, զի վկայեսցէ վասն Լուսոյն, զի ամենեքեան հաւատասցէն նովաւ»[29]: Հիշենք նաև, որ «Հայ հոգևոր հայրերի շարականներում Արեգակն արդարության գովերգությունը՝ Աստված-Լույսի՝ Քրիստոսի դերադույն փառաբանությունն է»[30]: Ուրեմն, Տրդատ III-ը, ի հակադրություն իր նախորդ դահակալների, պետք է կրոնական հանդուրժողականություն ցուցաբերած լիներ ինչպես իր մկրտությունից առաջ, այնպես էլ մկրտվելուց հետո: Դրա վկայությունը կարելի է համարել V դ. եկեղեցական սլատմիչ Սոզոմենոսի հետևյալ խոսքերը. «Ես տեղեկացա, որ հայերն ընդունել են քրիստոնեությունն ավելի առաջ: Ասում են, որ Տրդատը, որն այս ժողովրդի առաջնորդն էր, մի ինչ-որ աստվածանշան հրաշքի պատճառով, որ նրա տան մեջ պատահել էր, իսկույն դառել էր քրիստոնյա ու նաև հրամայել էր, որ քարոզության միջոցով այդ կրոնն ընդունեն բոլոր իր հպատակները»[31]:

Որ կրոնական հանդուրժողականությամբ աչքի ընկած Տրդատ III-ը չէր կարող լինել Գրիգոր Լուսավորչին զնդան նետած թագավորը, ցույց են տալիս նաև թվաբանական պարզ հաշվարկները: VIII դ. եկեղեցական պատմիչ Գևորգ Ասորին վկայում է, որ պատանի Գրիգորը Հայաստան //

---

27 Հ. Ա ճ ա ռ յ ա ն. Հայոց անձնանունների բառարան. հ. Գ, Երեւան, 1946, էջ 539: Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, ԼԹ, 373, ՁԷ, 654:

28 С. Б. А р у т ю н я н. Карапет.— Мифологический словарь, М., 1991, с. 277.

29 Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, ԽԷ, 422:

30 Է. Դ ա ն ի ե լ յ ա ն. նշվ. աշխ., էջ 22:

31 S o z o m e n o s. Historia Ecclesiastica, II, 8 *(Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. հ. Բ, մասն Ա, Երևան,1957, էջ 126).*

Մեծ Հայք եկել էր III դ. 70-ական թթ. կամ Դիոկղետիանոս կայսեր (284-305 թթ.) ժամանակ, կամ ավելի վաղ: Նա գրում է. «Գրիգորիսն այն, որ աշակերտեց ղՀայս, ո՛վ ուսումնասէր, հռոմեացի էր ազգաւ, ինչպէս որ յայտնի է իւր կենսագրութեան խօսքերէն, բայց տղայութեան ժամանակ Հայոց աշխարհն եկաւ կամ Դիոկղետիանոսի քրիստոնէից դէմ յարուցած հալածանաց կամ ուրիշ մեզ անծանօթ պատճառաւ»[32]: Գրիգոր Լուսավորչի «տղայութեան ժամանակ»-ը չէր կարող համընկնել Դիոկղետիանոսի գահակալման տարիների հետ, երբ նա արդեն հասուն տղամարդ էր: Եթե այդ «տղայութեան ժամանակ»-ը համարենք 15-20 տարեկանի միջև (իսկ նա ծնված է համարվում 250-ական թթ.), ապա «մեզ անծանօթ պատճառաւ» նա Հայաստան գալ կարող էր հենց III դ. 60-ական թվականների վերջին կամ 70-ական թվականներին, երբ Հայաստանում գահակալում էին Սասանյան արքայատոհմի ներկայացուցիչները: Մեր պատմիչների վկայությամբ, Գրիգոր Լուսավորիչը Խոր վիրապում գտնվել է 13-15 տարի[33]: Եթե նա այնտեղից դուրս է բերվել 301 թ., ապա Արտաշատի այդ զնգանը նետված պետք է լիներ 286-288 թթ. միջև: Իսկ եթե նրան այնտեղից հանել էին ավելի վաղ, ասենք, 293 թ., երբ Տրդատն առաջին անգամ գահակալեց Մեծ Հայքում, կամ 298 թ. երբ Տրդատը վերահաստատվեց իր գահին, ապա Գրիգոր Լուսավորիչը Խոր վիրապ նետված կլիներ 278-280 թթ. կամ 283-285 թթ. միջև, այսինքն՝ դարձյալ Սասանյան Ներսեհի, այլ ոչ թե Տրդատ III-ի օրոք: Թե Ներսեհը ինչպիսի կրոնական քաղաքականություն կարող էր վարել նվաճված Հայաստանում, ցույց են տալիս մասնավորապես այդ ժամանակաշրջանի սլարսկական արձանագրությունները: Հետագայում Իրանի արքայից արքաների դահին բազմած Ներսեհը իրեն համարում էր «կրոնին ամենանվիրվածը, ամենալավը, ամենաարգարը և ամենագործունյան»[34]: Իհարկե այս ամենը ընկալվելու էր զրադաշտական բարոյագիտության տեսանկյունից: Ներսեհը մինչև «Հայոց մեծ թագավոր» դառնալն էլ համարվել է «ազնվազարմ մազդայասն» (yly mzdysn) կամ այլ կերպ ասած՝ «անեղծ հավատով Ահուրամազդա // Որմիզդի երկրպագու»[35]: Որ Գրիգոր Լուսավորչին զնգան նետած թագավորը կարող էր լինել ոչ թե Տրդատ III-ը, այլ նրա նախորդ «Հայոց մեծ թագավոր» Ներսեհը, ցույց է տալիս նաև սրբահալած թագավորի խոզ դառնալու առասպելը: Նախ, ուշադրություն դարձնենք մի հանգամանքի վրա: Ագաթանգեղոսի երկի մեզ հասած խմբագրության 763-րդ պարբերությունում ասված է, որ խոզակերպ թագավորը Տրդատ է կոչվում, իսկ մինչ այդ նա պարզապես թագավոր է: Ապա, թագավորի խոզ դառնալու առասպելը դալիս է սասանյան Իրանից, որտեղ վարազը արքունի անասուն էր համարվում, ուստի արքայից արքայի կնիքը վարազի պատկեր ուներ: Վարազագիր // վարազ նկա-

---

32 Ց. Տ ա շ ե ա ն. Ագանթագեղոս առ Գէորգայ Ասորի եպիսկոպոսին եւ ուսումնասիրութիւն Ագաթանգեղեայ գրոց. Վիեննա, 1891, էջ 4:

33 Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, ԺԱ, 122, Ի, 215: Մ ո վ ս է ս Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի. Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը՝ Վարագ Առաքելյանի. Երևան, 1983, էջ 33: Յ ո վ հ ա ն Մ ա մ ի կ ո ն ե ա ն. Պատմութիւն Տարօնոյ, աշխատությամբ և առաջաբանով Աշ. Աբրահամյանի. Երևան, 1943, էջ 73: Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ պատմութիւն Հայոց. Երևան, 1996, էջ 43:

34 В. Г. Л у к о н и н. Иран в III веке. М., 1979, с. 72.

35 Նույն տեղում, էջ 73:

բաղիր մատանի էր կոչվում Շապուհ II-ի (309-370թթ.) կնիք-մատանին:Խոսրով I Անուշիրվանի (531-579թթ.) կնիքը նույնպիսին էր[36]: «Պարսից թագավորների գերրը» ևս վարազի պատկեր ուներ[37]: Հայաստանի Սասանյան գահակալները միաժամանակ պարսից թագաժառանգներ էին, իսկ վերջիններս վարազի պաշտամունքին առնչվում էին նաև իրենց կրած վարազագլուխ թագերի միջոցով: Այգպիսի գլխանոց-թագեր նրանք կրում էին հենց Տրդատ III-ի գահակալմանը նախորդած տարիներին: Վարահրան II (276-293թթ.) արքայից արքան իր դրամներից մեկի վրա պատկերված է կնոջ և թագաժառանգ որդու հետ միասին: Թագաժառանգի գլխանոց-թագը իր վերնամասով վարազի գլուխ է ներկայացնում: Այս նույն թագավորի թողարկած տարբեր տարիների դրամներին թագաժառանգը և թագուհին պատկերված են այնպիսի գլխանոց-թագերով, որոնք պատկերում են վարազի, ձիու, դիշատիչ թռչնի գլուխներ և առասպելական էակներին բնորոշ մանրամասներ[38]: Վարահրան II-ի դրամների այնպիսի մի տարատեսակ է հայտնի, որոնց վրա «Շահանշահն է դիմացը վարազագլուխ թագով թագաժառանդը»[39]:



Նկ. 1

IV-VII դդ. թվագրվող հայկական կոթողներից մի քանիսն ունեն վարազագլուխ թագավորի պատկերներ (նկ.1): Ընդունված կարծիքի համաձայն դրանք պատկերում են Տրդատ III-ին[40]: Մեր կարծիքով, դրանք վաղ շրջանից եկող ակունքներ ունեն, լինելով Արտաշիրական կոչված կոթողներին պատկերված Հայաստանի Սասանյան գահակալների վերարտադրությունը, որովհետև նրանք էին լինելու վարազագլուխ գլխանոց-թագերի կրողները: Արտաշիրական կոթողների գոյությունը հաստատվում է Մովսես Խո-

36 Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս. Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983, էջ 514, ծան. 123: Փաւստոսի Բիւզանդացւոյ պատմութիւն Հայոց, բնագիրը Ք. Պատկանյանի. Երևան, 1987, Р. Ф р а й. Նշվ. աշխ., էջ 315:

37 Փ ա վ ս տ ո ս Բ ո ւ զ ա ն դ. Հայոց պատմություն, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի. Երևան, 1987, էջ 436-437, ծան. 145:

38 В. Г. Л у к о н и н. Иран в III веке, с. 32.

39 Նույն տեղում, էջ 44, 50, 56:

40 ՀԺՊ. հ. 2, էջ 591, 594, 595:

ընացու հետևյալ վկայությամբ. «(Արտաշիրը) նա եւ զսահմանս հաստատեալս յԱրտաշիսէ, զքարինս յերկրի կացուցանելով, նորոգեաց, եւ յիւր անունն փոխելով Արտաշիրական անուանեաց»[41]: Բ. Առաքելյանը, վարազագլուխ թագավորի մասին առասպելական պատկերացումների ակունքները հայ հին գիցարանում որոնելով հանդերձ, նշում է, որ հայ քրիստոնեական եկեղեցին դրանից օգտվել է մարդկանց հոգեբանության վրա նաև տեսողական ազդեցություն գործելու նպատակով[42]: Այսուհանդերձ, դժվար



Նկ. 2

է պատկերացնել, թե Տրդատ III-ին հաջորդած Արշակունի հայ թագավորներից որևէ մեկը թույլ կտար ինչ-որ մեկին իր Արշակունի նախնուն և հայոց առաջին քրիստոնյա թագավորին ներկայացնել վարազագլուխ մարդու տեսքով, որովհետև հայի համար վարազը բացասական երևույթներ կրող մի էակ էր, իսկ հայ առասպելաբանության մեջ՝ խավարի և ընդերքի խոլ ուժերը մարմնավորող մի կերպար: Վարազ անասունի այդպիսի ընկալումով են պայմանավորված վարազանալ բառի նաև «գազանանալ, վայրենանալ», «կատաղել» իմաստները, (Եզնիկ Կողբացին վարազը որակում է գազանագույն դագան բառերով)[43]: Ը խավարը և ընդերքային խոլ ուժերը ներկայացնող առասպելաբանական կերպարը կարող էր հանդես գալ վարազի (կամ խոզի) տեսքով, ցույց է տալիս, օրինակ, Արշակունի թագավորների Աղձքի դամբարանի պատին արված պատկերը: Այստեղ լույսի և երկնային ուժերին անձնավորող մերկամարմին հերոսի հակառակորդը հենց վարազն է[44]: Հիշենք նաև հայ ժողովրդական հեքիաթների բարազխոզ // վարազը, որը հեծկան անասունն է մահվան և չար ուժերի անձնավորում պառավի, և կենդար «չարք, դև» բառը[45], որի կենդ արմատը տարբերակն է լինելու կինճ // կինջ «վարազ» բառի:

---

41 Խորենացի, Բ, հէ:

42 Բ. Առաքելյան. Հայկական պատկերաքանդակները IV–VII դարերում. Երևան,1949, էջ 115:

43 ՆՀԲ. հ. Բ, Երևան,1981, էջ 790: Հ. Աճառյան. Հայերեն արմատական բառարան. հ. 4, Երևան, 1979, էջ 314:

44 Նրա ուղեկից շները հիշեցնում են Սյունիքի Ջերմաջուր վայրի (տե՛ս նկ.2) ժայռապատկերներից մեկի շներին, որոնցից մեկը պատկերված է խաչանշանի հետ և հալածում է վիթխարի վարազին (Գ. Կարախանյան, Պ. Սաֆյան. Սյունիքի ժայռապատկերները.– «Հայաստանի հնագիտական հուշարձանները», №4, Երևան, 1970, նկ. 341, էջ 18–19):

45 Ղ. Ալիշան. Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց. Վենետիկ, 1895, էջ 215: Կենդ/կինջ/ կինճ_համարժեքության տեսանկյունից հմմտ. խինդ/խնջոյք, ստերդ/ստերջ, ադամուլտ/աղջամուղջ, լուրթ/լուրջ, զուարթ/ զուարճ և այլ զույգերում

Ի տարբերություն հին Հայաստանի, հարևան և հեռավոր մի շարք երկրներում խոզը համարվում էր սրբազան կենդանի՝ լուսավոր երևույթների կենդանական մարմնավորում, և առասպելաբանական մտածողությամբ համադրվում էր արևի հետ[46]*: Այդպես էր, օրինակ, հին Եգիպտոսում*[47] *և Սասանյան դարաշրջանի Իրանում: Վարազի առասպելաբանական կերպարի բացահայտման գործում կարևորվում է վարազագլուխ գլխանոցթագերի գոյության փաստը: Սասանյան դրամներին իրենց արտացոլումը գտած կենդանագլուխ գլխանոց-թագերի խորհրդանշանային իմաստները, ինչպես Վ. Գ. Լուկոնինն է գրում. «Կապված են շահանշահի պատրոնի՝ Վերեթրագնա աստծու հետ (համենայն դեպս վարազը, ձին և թռչունը նրա տարբեր ինկարնացիաներն են)»*[48]*: Հին իրանական Վերեթրագնա դիցանունը նախատիպն է ինչպես հայկական Վահագն-ի, այնպես էլ վաղասասանյան Վարահրան // Վարհրան-ի*[49]*: Վերջինս արքայից արքաների անվանացանկում ամենատարածված անուններից մեկն է (համահավասար Որ-*

Նկ. 3

միզդ // Հորմիզդ անվանը)[50]*: Ռ. Ֆրայի գրքում բերված է (նկ.3) սասանյան կցազարդ քիվի մի հատված (տրամագիծը 37,5 սմ), որտեղ պատկերված է առասպելաբանական վարազի գլուխը*[51]*: Այն զբաղեցնում է պատկերի կենտրոնական մասը և առնված է արևի սկավառակը խորհրդանշող շրջանակի մեջ: Արտաքին միջավայրից վարազի գլուխը սահմանազատված*

առկա հնչյունական համապատասխանությունները (Г. Б. Джаукян. Очерки по истории дописьменного периода армянского языка. Ереван, 1967, с. 302—304): Կենդար *բառում -ար բաղադրիչը վերջածանց է: Հմմտ.* կերպ-ար, մոլ-ար, պալ-ար պատահար *և այլն (Հայոց լեզվի պատմական քերականություն. հ. 2, Երևան, 1975, էջ 90): Ըստ այսմ, մեր* կենդար-ը *չի կարող փոխառյալ լինել հունարեն* κένταυρος *բառից:*

46 В. В. Иванов, В. Н. Топоров. Сварог.— Мифы народов мира. М., 1988, с. 420.

47 H. Grapow. Die Himmelsgottin Nut als Mutterschwein.– ÄZ, Bd. 71, 1935, S. 45–47.

48 В. Г. Луконин. Иран в III веке, с. 32.

49 R. Schmitt. Iranische Namenschichten und Namentypen bei Altarmenischen historikern.– *Միջազգային հայերենագիտական գիտաժողով. Երևան, 21–25 սեպտեմբերի, 1982: Զեկուցումներ. Երևան, 1984, էջ 462:*

50 Ֆրայ. *Նշվ. աշխ., էջ 369:*

51 Նույն տեղում, նկ. 111:

է երկու (արտաքին և ներքին) շրջանագծերով, որոնց միջև տեղադրված են օրվա 24 ժամերը խորհրդանշող 24 շրջանակներ: Վարազգլխի ուղղվածությունը ձախից աջ է՝ համապատասխան երկնակամարում արևի շարժման ուղղությանը (արևելքից՝ արևմուտք): Այսպիսով, կասկած լինել չի կարող, որ Սասանյան թագաժառանգները վարազաղլուխ թագեր կրել են այն պատճառով, որ առասպելաբանական մտածողությամբ վարազն ընկալվել է որպես զրադաշտականների ամենամեծ աստծու՝ Արեգակի, կենդանական դրսևորումը: Այդպիսի թագեր կրելու էին նաև Տրդատ III-ին նախորդած Սասանյան գահակալները՝ «Հայոց մեծ թագավորները»: Դա է եղել վարազակերպ հայոց թագավորի մասին առասպելի ստեղծման պատմական հենքը:

Մինչև «Հայոց մեծ թագավոր» դառնալը, Սասանյան Ներսեհը իշխում էր ներկայիս Իրանի, Աֆղանստանի և Պակիստանի հարակից մարզերն ընդգրկած տարածքում և կրում էր «թագավոր Սակաստանի, Տուրեստանի և Հնդկաստանի» տիտղոսը[52]: Ս. Երեմյանի կարծիքով, Որմիզդ-Արտաշիրից սկսած, Հայաստանի Սասանյան գահակալները այստեղ հիմնել են զրադաշտական ատրուշաններ (Հուր, Հրատն), որտեղ սպասարկում էին նրանց կողմից «Սակաստան, Տուրեստան և Հնդիկք մինչև ծովափ» թագավորությունից բերված հնդիկ քուրմերը[53]: Բնականաբար, նրանց մեջ լինելու էին նաև պարսիկ մոգեր: Սրանք էլ կործանողներն են եղել հայ հեթանոսական աստվածների կուռքերի և ավերողները նրանց սրբավայրերի: Զրադաշտական ատրուշանները կառուցվելու էին դրանց ավերակների վրա: Ըստ Մովսես Խորենացու, Արտաշիրը «զմեհենիցն պաշտամունս առաւել եւս յորդորէ. այլ եւ զհուրն որմզդական, որ ի վերայ բագնին որ ի Բաղաւան, անշէջ հրամայէ լուցանել»[54]:

Հայաստանի Սասանյան գահակալներից վերջինի՝ Ներսեհի օրոք հռոմեացիները, որոնք վերագրավել էին Շապուհ I-ին զիջած տարածքներից շատերը, ընդհուպ մոտեցել էին Մեծ Հայքի սահմաններին: Դիոկղետիանոս կայսրը 287թ. Մեծ Հայքի թագավոր էր ճանաչել հայոց թագաժառանգ Արշակունի Տրդատին: Իրանում Վարահրան II-ի մահից հետո արքայից արքա էր հռչակվել նրա որդին՝ Վարահրան III-ը (293թ.): Վերջինիս դեմ ելավ «Հայոց մեծ թագավոր» Ներսեհը, որն իրեն էր համարում արքայից արքաների դահի օրինական ժառանգորդը: Գահակալական պայքար սկսած Ներսեհը քաջ գիտակցելով, որ իր հեռանալուն պես Հայաստանը կզբաղեցվի հռոմեացիների կողմից և Տրդատն այստեղ կվերականգնի Արշակունիների իշխանությունը, որոշեց «կամովին» գահը զիջել Տրդատին: Ըստ երևույթին, նա հույս ուներ, որ դրանով կապահովի իր թիկունքը և իրավունք կստանա իր մղելիք պայքարում օգտվելու նաև հայ մեծամեծների զինական աջակցությունից: Նման համաձայնության գոյության մասին են խոսում ինչպես Ներսեհի կողմնակիցների շարքում հայ մեծամեծների առկայությունը հաստատող Փայքուլիի արձանագրությունը[55], այնպես էլ այն իրողությունը որ Ներսեհի հաղթանակն ու գահակալումը

52 В. Г. Л у к о н и н. Культура Сасанидского Ирана, с. 55, 60, 63.
53 ՀԺՊ. հ. 2, էջ 75:
54 Խ ո ր ե ն ա ց ի, Բ, հէ:
55 В. Г. Л у к о н и н. Նշվ. աշխ., էջ 115–116, ծան. 19:

չնորհավորողներից մեկը Տրդատն էր՝ Իրանի նոր գահակալին Տիդրանակերտի իր արձանագրության մեջ «աստված արքայից արքա» (երիցս) կոչողը[56]:

293 թ. Մեծ Հայքի թագավոր դարձած Տրդատը այլակրոնների նկատմամբ որևէ հալածանք չէր կիրառել: Ըստ երևույթին, բոլոր կրոններն էլ նա թույլատրելի էր համարել այնպես, ինչպես հետագայում (313թ.) Միլանի էդիկտով Հռոմեական կայսրության համար դա արել է Կոստանդին Մեծը: Հակառակ դեպքում անհասկանալի կմնա, թե ինչն էր Հռիփսիմեին և Դիոկղետիանոս կայսրից հալածված մյուս սրբուհիներին դրդել ապաստան որոնելու Հայաստանում: Չնայած Տրդատ III-ը կայսեր դաշնակիցն ու վասալն էր, բայց փաստորեն չէր արգելել նրանց հանդրվանելու Վաղարշապատում՝ «ի նիստս թագաւորացն Հայոց»[57]: Ինչպես Մ. Աբեղյանն է նկատում, իբր թե Տրդատ III-ի կողմից իրականացված «Հռիփսիմյանց վկայաբանության մեջ դժվար թե որևէ իրական պատմական բան լինի, բայց եթե այն, որ իրոք Վաղարշապատում նահատակված են եղել կույսեր, քանի որ V դ. արդեն եղել է այնտեղ նրանց վկայարանները»[58]: Ավելացնենք. ժողովուրդը հիշում էր, որ այդ վկայարանները կառուցվել էին Տրդատ թագավորի կողմից՝ նրա կնոջ և քրոջ մասնակցությամբ (ըստ Ագաթանգեղոսի, դրանց կառուցումը նախորդել էր Տրդատի մկրտությանը)[59]: Սրբուհիների նահատակությունը իրագործվելու էր այն ժամանակ, երբ արքայից արքա դարձած Ներսեհը պատերազմ սկսեց Հռոմեական կայսրության դեմ և 296 թ. վերագրավեց Հայաստանը (որը «երթարկված էր հռոմեացիների իշխանության»)[60]: Այս անգամ ևս Տրդատը Հայաստանում չէր: Իր գահին նա վերահաստատվեց 298թ. Մծբինի հաշտությամբ միայն:

Տրդատ III-ը իր հանդուրժողական կրոնական քաղաքականությունը չէր փոխել անգամ 301թ. մկրտվելուց և քրիստոնեությունը Հայաստանի պետական կրոն հռչակելուց հետո: Հայաստանում հալածանքների չէին ենթարկվել նույնիսկ այն մոգերն ու քրմերը, որոնք այստեղ էին բերվել Հայաստանի Ասսանյան գահակալների կողմից: Հարկ եղած դեպքում, Տրգատը չէր խորշում օգտվելու նրանց կուտակած գիտելիքներից: Այսպես օրինակ, ըստ Մովսես Խորենացու, փղախտով («եղեփանդական բորոտությամբ») տառապող Կոստանդին կայսրին «ոչ կարացին բուժել արիողական կախարդքն եւ մարսիկեան բժիշկք. յաղագս որոյ յղեաց առ Տրդատ՝ առաքել նմա դիւթս ի պարսից եւ ի հնդկաց. սակայն եւ այնք ոչ հասին նմա յօգուտ»[61]: Եթե կրոնական հարդուրժողականություն ցուցաբերած Տրդատ III-ը հալածանքների չէր ենթարկել պարսիկ և հնդիկ զրադաշտական մոգերին ու քրմերին, ապա մեծ համարձակություն չի պահանջվում ենթադրելու համար, որ նա հալածանքների չէր ենթարկի նաև նախ հայ քրիստոնյաներին (երբ դեռևս հեթանոս էր), ապա հայ հեթանոսներին (երբ արդեն քրիստոնյա էր): Ուրեմն, Տրդատ III-ին իզուր է վերագրվել հեթա-

---

56 ՀԺՊ. հ. 2, էջ 64–65:
57 Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, ԺԳ, 150:
58 Մ. Ա բ ե ղ յ ա ն. Երկեր. հ. Գ, Երևան, 1968, էջ 185:
59 Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, ՃԶ, 766-768:
60 A m m i a n u s M a r c e l l i n u s, XXII, I, 5,13 *(ՀԺՊ. հ. 2, էջ 66).*
61 Խ ո ր ե ն ա ց ի, Բ, ԺԳ:

նոսական մեհյանները կործանողի դերը: Նրա հրամանով և Գրիգոր Լուսավորչի ղեկավարությամբ Հայաստանի կանգուն մնացած հեթանոսական մեհյաններում միայն վերացվում էին հեթանոսական աստվածների կուռքերը և փոխարենը դրվում էին փայտե խաչեր: Դարձյալ գիմենք Մովսես Խորենացուն: Ըստ նրա, վրաց աշխարհում քրիստոնեությունը անարդել քարոզած և տարածած Նունե Երանելին Գրիգոր Լուսավորչին հարցրել էր, թե «զինչ հրամայեսցէ նմա գործել այնուհետեւ. քանզի յօժարութեամբ ընկալան վիրք զքարոզութիւն Աւետարանին: Եւ հրաման ընդունի՝ կործանել զկուռսն, որպէս ինքն արար, եւ կանգնել զպատուական նշան խաչին մինչեւ ցօր տալոյ Տեառն հովիւ յառաջնորդութիւն նոցա»[62]:

Իսկ ինչպե՞ս և ինչո՞ւ են Հայաստանի Սասանյան գահակալների բռնաբարքները և ոճիրները, մանավանդ Ներսեհինը, հետագայում վերագրվել Տրդատ III-ին: Կարծում ենք, որ այդ գործում դլխավոր մեղավորը եղել է Ագաթանգեղոսի երկի մեղ չհասած տարբերակի խմբագրողը: Ինչպես Մ. Աբեղյանն է ցույց տվել, նախապես գոյություն է ունեցել «IV դ. մի դործ, մի համառոտ պատմություն Ս. Գրիգորի, պատմական արժեք ունեցող մի երկ, որից օգտվել է հեղինակը իր դործը խմբագրելիս»[63]: Նախնական խմբագրությունը «հորինված է V դ. առաջին կեսին, բայց անփոփոխ չի մնացել, հետագայում վերախմբագրված է»[64]: Ա. Տեր-Ղևոնդյանն ավելացնում է. «Հինգերորդ դարի առաջին կեսում կազմվել է մի խմբագրություն, որի հայերենը դեռ հայտնի չէ, բայց կան նրանցից ծագող ասորերեն, հունարեն և արաբերեն խմբագրություններ, որոնք Վարք են կոչվում: Այս հայերեն բնագիրը, ըստ երևույթին, դաբերի ընթացքում մոռացության է տրվել»[65]: Ըստ երևույթին, Ագաթանգեղոսի երկի առաջին խմբագրությունը կազմվել էր 428թ. անմիջապես հետո, երբ Արշակունյաց թագավորության վերացումով Հայաստանը վերածվել էր պարսկական մարզպանության: Այդ ժամանակ էլ անհայտ խմբագրողը Ս. Գրիգորի Վարքին, այլ զրույցների հետ միասին, ավելացրել էր նաև Շապուհ Պարսիկի Հայաստանում գահակալած տարիներին (416-420 թթ.) հավանաբար պարսկերենով գրված ինչ-որ պատմական ստեղծագործություն: Ինչպես Մ. Աբեղյանն է նկատել. «Խմբագրողը նույնը քաղել է տարբեր աղբյուրներից և չի կարողացել այնպես ի մի ձուլել, որ կրկնություն չլինի և առաջ չդան նույնիսկ հակասական մասեր ու ավելորդաբանություններ, խոսքի ու պարբերության ընդհատումներ, որոնցով լի է այս պատմությունը»[66]:

Հայոց թագավոր կարգված Շապուհ Պարսիկի և պարսից արքունիքի կողմից հայոց Դարձի պատմության պարսկամետ դիրքերից նենգափոխումը խրախուսելի մի ձեռնարկում էր նկատվելու: 125-150 տարի առաջ տեղի ունեցած դեպքերի նորովի մեկնաբանությամբ Շապուհ Պարսիկի շրջապատը ձգտելու էր տանելի դարձնել քրիստոնյա Հայաստանում զրադաշտական այս նոր թագավորի՝ պարսից թագաժառանգի գահակալումը՝ որ-

62 Նույն տեղում, Բ, ձզ:
63 Մ. Ա բ ե ղ յ ա ն. Երկեր. հ. Գ, էջ 182:
64 Նույն տեղում, էջ 184: Տե՛ս նաև Н. А д о н ц. Армения в эпоху Юстиниана. Ереван, 1971, с. 341—342, пр. 1.
65 Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս. Հայոց պատմություն, էջ 506:
66 Մ. Ա բ ե ղ յ ա ն. Երկեր. հ. Գ, էջ 183–184:

պես վերջնական նպատակին հասցնող կարևոր քայլերից մեկի: Իսկ թե ո՞րն էր պարսից արքունիքի վերջնական նպատակը, ցույց են տալիս ինչպես Մովսես Խորենացին, այնպես էլ Ղազար Փարպեցին: Շապուհ Պարսիկին հայոց թագավոր կարգելով, ըստ Փարպեցու, պարսիկները մտածում էին հետևյալ կերպ. «Զի [հայերը] յօրինացս մեր (պարսիկների) օտար են եւ ատեցողք, եւ միահաւան ունին զպաշտօն նոցա (բյուզանդացիների) եւ զօրէնս... Հաղորդեալ առ միմեանս զատուցեալք այնուհետեւ որոշին ի սիրոյ նոցա եւ յօրինացն»[67]: Խորենացին ավելի հեռահար նպատակ է մատնանշում. «Զի մարթ լիցի զնոսա եւ ի դեն մազդեզանց սաղապեցուցանել, որով ամենեւիմբ զատչիցին ի Յունաց»[68]: Սա էր վերջնական նպատակը: Իսկ դրան հասնելու համար պետք էր նախ սկսել նրանից, որ Տրդատ III-ն ու նրա շրջապատը ներկայացվեին որպես Հռոմի դրածոներ, հայոց շահերն անտեսած մարդիկ, հեթանոսական մեհյանները կործանողներ, բոլոր կրոնների հալածիչներ, ոչ միայն հեթանոս քրմերին, այլև քրիստոնյա քարոզիչներին կոտորողներ և այլն: Ըստ այսմ, Տրդատ III-ը ամեն կերպ սևացվելու էր, իսկ նրա նախորդ Սասանյան գահակալների բռնարարքներն ու ոճիրները վերադրվելու էին նրան: Վերևում արդեն տեսանք, որ Ագաթանգեղոսի երկում Տրդատին և Գրիգոր Լուսավորչին է վերագրված Տիր//Արեգակի և Անահիտ//Լուսնի մեհյանների կործանումը, երբ Մովսես Խորենացու հաղորդումներից պարզվում է, որ դրանց կործանողը եղել է Սասանյան Արտաշիրը//Որմիզդ-Արտաշիրը:

Ագաթանգեղոսի երկի ինչ-ինչ հատվածների պարսկերեն բնագրեր ունենալու մասին են վկայում այնտեղ առկա պարսկաբանությունները: Օրինակ, Տիրի Մեհյանի «դիւան գրչի Որմզդի» որակումը բացահայտում է որակողի պարսկական կրթություն ստացած կամ զրադաշտական լինելը: Հակառակ դեպքում սասանյան ժամանակաշրջանի Որմիզդի (հին պարսկական Ահուրամազդայի) փոխարեն հիշատակված կլիներ հայ հեթանոսական դիցարանի նրա զուգահեռը՝ աստվածահայր Արամազդը[69]: Վաղուց նկատված այս հանգամանքը թյուրիմացության տեղիք էր տվել: Օրինակ, ըստ Հ.Գելցերի. «Աստից կարելի է հետևեցնել, թե հեթանոս դիցաբան ճարտասանից դպրության միացած Երազամույն պատգամատեղվույն հետ, գրեթե բոլորովին նոր և վերջին ժամանակաց հաստատություն մըն է»[70]:

Առավել արտառոց է թվում այն փաստը, որ Ագաթանգեղոսի երկում հայ քրմերը «դև» -եր են կոչվում[71]: Աքեմենյան Քսերքսեսի (մ.թ.ա. 486-465 թթ.) ժամանակներից սկսած Ահուրամազդայի երկրպագուները այդ տերմինը գործածում էին նշելու համար հեթանոսական այն աստվածներին, որոնց պաշտամունքը անհարիր է իրենց աստծու պաշտամունքին և որոնց սրբարանները ենթակա էին ավերման[72]: Այս նույն տերմինն է կիրառում նաև Ահուրամազդա//Որմիզդի մոգպետ հիշյալ Կարտիրը, երբ իր արձանագրություններում ներկայացնում է Վարահրան I-ի և Վարահրան II-

67 Ղազարայ Փարպեցւոյ պատմութիւն հայոց. Թուղթ առ Վահան Մամիկոնեան, քննական բնագիրը Գ. Տեր- Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի. Երևան, 1982:
68 Խ ո ր ե ն ա ց ի, Գ, ծե:
69 Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, ճթ, 785:
70 Հ. Գ ե լ ց ե ր. Հեաազօտութիւն հայ գիցաբանութեան. Վենետիկ, 1897, էջ 42:
71 Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս, ՃԸ, 780, ճթ, 785 ճթ, 786 և այլուր:
72 Ր. Փ ր ա յ. Նշվ. աշխ., էջ 164–165:

ի դահակալության տարիներին իր կատարած գործերի արդյունքները. «...Ահրիմանի և դևերի հավատը նահանջեց և վտարվեց երկրից: Թե՛ հրեաները, թե՛ բուդդայական քրմերը, թե՛ բրահմանները, թե՛ նազարեացիները, թե՛ քրիստոնյաները..., թե՛ զինդիկները ջախջախվեցին, իսկ [նրանց] աստվածների պատկերները ավերվեցին, և դևերի ապաստարանները ոչնչացվեցին և աստվածների «բույների» ու նրանց կացարանների վերածվեցին»[73]: Ժամանակին Ա. Մարտիրոսյանը նկատել էր, որ «Կարտիրի արձանագրությունների մեջ և Ագաթանգեղոսի էջերում զարմանալիորեն միատեսակ արտահայտություններ կան. «Դևերը նահանջեցին երկրից և վտարվեցին: Դևերի համար մեծ խայտառակություն եղավ»,– ասված է Կարտիրի մոտ: «Կերպակերպ նմանութեամբք դիւացն փախստական լինելով անկանէին ի կողմանս խաղտեաց»... Այստեղ էլ դևերի համար մեծ խայտառակություն եղավ: Այստեղ էլ դևերը մեծ հարված կրեցին[74]:

Հայաստանի Ասանյան գահակալներին վերաբերող խորենացիական հազորդումները ևս մատնացույց են անում պարսկերեն կամ պարսկամետ ինչ-որ սկզբնաղբյուր: Խոսքը մասնավորապես Սասանյան Արտաշիրի՝ Որմիզդ-Արտաշիրի (միա՞յն), հայաստանյան գործունեությանը նվիրված Խորենացու Բ գրքի հէ գլխի մասին է: Այն կրում է հետևյալ վերնագիրը. «Յաղագս խաղաղութեան Պարսից եւ Յունաց, եւ շինելոյ Արտաշիրի գՀայս յամս անիշխանութեան»: Եթե նախորդ գլխում (Բ, հզ) մեր պատմահայրը գրում է, թե «համարձակաբար արշաւեալ ի մեզ Արտաշիրի, եւ զզօրս Յունաց փախստական արարեալ, գերելով զյոլով մասն աշխարհիս՝ յաւեր գարձուցանէ»[75], ապա այստեղ՝ հէ գլխում, ականատեսն ենք հակառակ պատկերի. «Իսկ Արտաշիրի գեղեցկապէս յարգարեալ գաշխարհս Հայոց՝ ի կարգ առաջին հաստատէր»:

Այս նույն գլխում պարսկաբանություն է սահման բառի գրաբարին ոչ բնորոշ իմաստով գործածումը, որովհետև հայերենում երբևէ այդ բառը «սահմանաքար, սահմանորոշ նշան» չի նշանակել[76]: Ուշագրավ է, որ Արտաշիսյան սահմանաքարերի մասին խոսելիս Խորենացին գործածում է «նշանս սահմանացն» բառակապակցությունը,[77] բայց Արտաշիրական սահմանաքարերը ուղղակի «զսահմանս» են կոչվում[78]: Սասանյան դարաշրջանի պարսկերենում (միջին պարսկերեն, պահլավերեն), samān<*sāhman բառը նախ և առաջ «սահմանորոշ նշան» էր նշանակում[79]: Նոր պարսկերենի sāman բառի բազմաթիվ իմաստներից մեկն է «նշան, որ իցէ եղեալ վասն որոշման սահմանի»[80]: Պարսկաբանություն է ներկայացնում նաև այս նույն գլխում չապուհ բառի գործածումը: Որմիզդ-Արտաշիրի որդի Որմզդակը[81] Խորենացու աղբյուրում չապուհ է կոչվել արքայորդի լինելու

---

73 В. Г. Л у к о н и н. Культура Сасанидского Ирана, с. 87.

74 Ա. Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն. Մաշտոց (պատմաքննական տեսություն). Երևան, 1982, էջ 94:

75 Խ ո ր ե ն ա ց ի, Բ, հզ:

76 ՆԲՀ, հ. Բ, էջ 687–688:

77 Խ ո ր ե ն ա ց ի, Բ, ծզ:

78 Նույն տեղում, հէ:

79 Հ. Ա ճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան. հ. 4, էջ 162:

80 Նույն տեղում, էջ 162, «Персидско-русский словарь», т. II, М., 1970, с. 13.

81 ՀԺՊ, հ. 2, էջ 49:

պատճառով. պարս. sāh-pūhr «արքայ-որդի»: Բայց Խորենացին, որին Որմզդակ անունն անհայտ է, բառն ընկալել է որպես անձնանուն: Սասանյան Արտաշիրի (այս դեպքում ևս Որմիզդ-Արտաշիրի) մասին իր հաղորդումները նա ավարտում է հետևյալ բառերով. «յետ նորա որդի նորին, որ անուանեցաւն Շապուհ, որ լսի արքայամանուկ»[82]: Լ. Հովհաննիսյանը նշելով, որ շապուհ // արքայամանուկ նշանակում է «արքայորդի», ավելացնում է. «Գրաբարի բառարանները չեն գրանցել հավանաբար նկատելով որպես հատուկ անուն»[83]:

Այսպիսով, կասկածից վեր է, որ Ագաթանգեղոսի երկի խմբագրողին հասել էր հայոց Դարձի և նրան նախորդած դեպքերի իրական ընթացքը խեղաթյուրված, իսկ պատմական հայտնի դեմքերի բնութագիրը և նրանց փոխհարաբերությունները այլափոխված ներկայացնող մի երկ: Նրա նկատմամբ Ագաթանգեղոսի երկի առաջին խմբագրությունը կազմած անձնավորության ցուցաբերած ոչ քննադատական մոտեցումը, մեր կարծիքով, պայմանավորված է եղել հետևյալ հանգամանքներով:

1. V–VII դդ. հայ մատենագրության մեջ արմատացած սովորության համաձայն, մերժելի էին կյանքի հոգևոր-մշակութային ոլորտին վերաբերող բոլոր այն երևույթները, որոնք նախաքրիստոնեական էին՝ հեթանոսական: Հ. Հակոբյանի կարծիքով, «Սկզբնաղբյուրները խմբագրող, հաճախ փոխադրող անձը արդեն խորթացած էր հեթանոսության նկատմամբ՝ անդամ II–IV դդ. առնչությամբ. նրանում տեսնում էր վտանգ ու նրա նկատմամբ տանում էր վերացական հաղթանակներ (տեսնելով, բայց չպրպտելով հետևանքները)... Չորրորդ դարի սկզբի դեպքերին վերագրվում է շատ ավելի բռնի և դրամատիկ բնույթ, քան եղել է իրականում»[84]:
2. Ագաթանգեղոսի երկի առաջին խմբագրողը հայոց Դարձին նախորդած ժամանակաշրջանի դեպքերին և դեմքերին նայում էր առնվազն 150 տարիների հեռվից, երբ արդեն շատ աղոտ էին դարձել հիշողությունները Տրդատ III-ին նախորդած «Հայոց մեծ թագավորների» մասին, չնայած պահպանվում էին հիշողությունները նրանց բռնարարքների և ոճրագործությունների մասին: Զրադաշտական այդ Սասանյանները մարդկանց հիշողության մեջ չէին մնացել ո՛չ իրենց անուններով, ոչ էլ իրենց անհատական բնութագրով և վերածվել էին հեթանոս հայոց թագավորի հավաքական կերպարի: Իսկ այդ կերպարը քրիստոնյա հայի մտապատկերում հեշտությամբ կարող էր շփոթվել հեթանոս Տրդատի կերպարի հետ:
3. Ինչպես Տրդատ III-ի անմիջական նախորդը՝ Ներսեհը, այնպես էլ Որմիզդ-Արտաշիրը և Որմզդակը տեղ չէին գտել նաև հայոց արքայացանկերում: Այս հանգամանքը հեշտացնելու էր այն անձնավորության (կամ անձանց) գործը, որոնք Հայաստանի Սասանյան գահակալների ի-

82 Խ ո ր ե ն ա ց ի, Բ, հէ:

83 Լ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Նյութեր պատմական բառարանագրության. Երևան, 2001, էջ 12:

84 Հ. Հ ա կ ո բ յ ա ն. Մեհյանների կործանման և հայոց Դարձի պատմության որոշ մանրամասներ. Հայոց սրբերը և սրբավայրերը. ակունքները, տիպերը, պաշտամունքը. Երևան, 2001, էջ 156:

բականացրած բռնարարքները գիտակցաբար թե անգիտակից կերպով վերագրելու էին (և վերագրել են) Տրդատ III-ին:

4. Տրդատ III-ին նախորդած Սասանյան գահակալների չարագործությունները ու բռնարարքները նրան վերագրելու մեջ «մեղքի» բաժին ունի նաև ինքը՝ Տրդատ III-ը: Մեր պատմահոր ձեռքի տակ եղած արքայացանկից պարզվում է, որ Տրդատ III-ը, ամենայն հավանականությամբ, հայոց գահի վրա իրեն նախորդած Սասանյան արքայազունների հիշատակը պատմության էջերից ջնջելու նպատակով նրանց գահակալած տարիների մի մասը համարել է «ամս անիշխանութեան»[85], իսկ մյուս մասը՝ գրանցել իր հաշվին: Նա համարվել է թագավորած «ամս յիսուն եւ վեց»[86], այսինքն՝ 274–330 թթ., չնայած հայտնի է, որ 274–293 թթ. Հայաստանի գահին բազմած էր Սասանյան Ներսեհը: Որ դա իրոք այդպես է, երևում է հետևյալից: Տրդատի՝ Խորենացու բերած գահակալության առաջին տարին ճշտիվ համընկնում է Սասանյան Ներսեհի Հայաստանում դահ բարձրանալու տարվա հետ: Սասանյան արձանագրությունների հաղորդած տվյալներից հայտնի է, որ Որմիզդ-Արտաշիրը Հայաստանում թագավորել է մինչև 273 թ.[87]: Նրան հաջորդել է որդին՝ Որմզդակը (խորենացիական Շապուհը) որ այստեղ իշխել է «ցթագաւորելն Տրդատայ, ամ մի»[88], այսինքն՝ 273–274 թթ.: Ուրեմն, Որմզդակին հայոց գահի վրա փոխարինած Ներսեհի գահակալելու տարին լինում է 274-ը: Հետևաբար հաշվարկով ևս Տրդատի գահակալման սկիզբն ընկնում է այդ նույն թվականին, որոհետև նրա գահակալության վերջին տարին 330 թ. է. 330–56–274: Արդյունքում Տրդատ III-ի հաշվին են գրանցվել ինչպես Ներսեհի գահակալած տարիները, այնպես էլ այն տարիներին «Հայոց մեծ թագավորի» ծավալած գործունեությունը՝ նրա ոճրագործություններն ու բռնարարքները ներառյալ:

Մեր պատմահորը ոչինչ հայտնի չէ Տրդատ III-ի կողմից Գրիգոր Լուսավորչին չարչարելու, նրան զնդան նետելու, Հռիփսիմեին և մյուս սրբուհիներին նահատակելու մասին: Նրան ոչինչ հայտնի չէ նաև Տրդատի և Գրիգոր Լուսավորչի ավերած հեթանոսական տաճարների մասին: Իր երկի II գրքի վերջին գլխում, ընդհակառակը, նա պարզորոշ նշում է, որ քրիստոնեությունը ևս Հայաստանում բռնությամբ չէր տարածվել (այստեղ նա համամիտ է Սոզոմենոսի հետ): Միմյանց հետ համեմատելով հայոց Գարձի մեջ Գրիգոր Լուսավորչի և Տրդատի ունեցած վաստակները և առաջնությունը Գրիգոր Լուսավորչին տալով հանդերձ, Մովսես Խորենացին ավելացնում է. «Այլ զառաւելութիւն ասեմ աստ զթագաւորին. քանզի խորհելն յաղագս Աստուծոյ եւ ճգնազգեցիկն լինել՝ զոյգ երկոցունց. իսկ նուաճել հաւանողական կամ բռնաւորական բանիւ՝ առաւել էր թագաւորին շնորհ. քանզի ըստ հաւատոցն ոչ ինչ կասեցուցանէր զգործսն»[89]:

---

85 Խ ո ր ե ն ա ց ի, Բ, հթ:
86 Նույն տեղում, ղբ:
87 В. Г. Л у к о н и н. Նշվ. աշխ., էջ 197.
88 Խ ո ր ե ն ա ց ի, Բ, հէ:
89 Նույն տեղում, ղ:

КТО БЫЛ МУЧИТЕЛЕМ ГРИГОРА ЛУСАВОРИЧА?
(Трдат Аршакуни или Нарсе Сасанян?)

САРГИС ПЕТРОСЯН

Резюме

По сообщению Мовсеса Хоренаци, епископ Кесарийский Фирмилиан описал, как в Армении многие из христиан приняли мученическую смерть от иноземных царей "до царствования Трдата, в годы безвластия" (Хоренаци, II, 75). Впоследствии, считая сасанидских царей Армении узурпаторами, аршакид Трдат III (298 – 330гг.) старался уничтожить память о них, в особенности память о своем предшественнике – сасаниде Нарсе. По Хоренаци (II, 92), Трдат царствовал 56 лет, т.е. в 274 – 330 гг. Но известно, что с 274 г. до 293 г. в Великой Армении правил "великий царь армян" Нарсе. Это обстоятельство стало одной из причин того, чтобы спустя 100 – 150 лет приписать язычнику Трдату также и преступные деяния Нарсе. По Агатангехосу, в начале своего правления Трдат приказал заточить в темнице города Арташата известного проповедника Григора и предать мученической смерти дев Рипсимеанц. За это наказанный Богом царь был превращен в кабана. Когда по его приказу освободили святого, тогда и с царя спало звериное обличие. Надо заметить, что первоначально фольклорно-литературный образ Трдата никакого отношения не мог иметь к легенде о царе-кабане. Известно, что на сасанидских монетах портрет наследника обычно представлен в короне-кулахе, увенчанной головой какого-либо животного, в том числе кабана. Вероятно, кабанаголовые короны-кулахи носили также сасанидские цари Армении. В таком случае напрасно с именем Трдата связывают те скульптурные памятники Армении IV в., которые изображают кабанаголового царя. Историческим прототипом этого мифологического образа мог быть сасанид Нарсе – ярый зороастриец, мучитель святого Григора и дев Рипсимеанц.

WHO WAS THE TORMENTOR OF GRIGOR LUSAVORICH?
(Tiridat Arshakuni or Narseh Sassanid?)

SARGIS PETROSYAN

Summary

At the beginning of his reign Arshakid Tiridat III (298–330 A. D.), still being pagan, ordered famous preacher Grigor to be imprisoned in dungeon. The king was punished for it and turned into a boar, as recorded by historian Agatangeghos. When the king ordered to release Grigor the Christian from prison, the boar face dropped from him. Folklore-literature image of Tiridat couldn't have been originally connected with the legend about king-boar. The portrait of Prince Royal on Sassanid coin is represented in crown-kulah, decorated with the head of any animal, even the boar. The boar-head crown-kulahs were probably worn by Sassanid kings of Armenia as well. Thus it seems groundless to connect the name of King Tiridat with the boar- head king depicted in the historical monuments of Armenia dating from the 4th century. Historical prototype of this mythologocal image could evidently be considered Sassanid Narseh (274–293 A. D.), the predecessor of Tiridat III, an ardent zoroastrian and the tormentor of St. Grigor, Ripsimeh and her fellow martyrs.